



Հայաստանի Հանրապետության  
Ազգային ժողովի ընտրություններ  
2012

## **ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**Ընտրատարածքային  
ընտրական հանձնաժողովների  
անդամների համար**

Երևան 2012

Այս ուղեցույցի հիմքում ընկած են ՀՀ Ընտրական օրենսգրքի հիմնադրույթները և ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները: Ձեռնարկում առաջարկությունները, խորհուրդները և քայլերը նպատակ ունեն նպաստել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը, Ընտրական օրենսգրքի դրույթների ճշգրիտ կիրառմանը և ԿԸՀ-ի սահմանած ընթացակարգերի պահպանմանը: Այսուհանդերձ, ուղեցույցը չի կարող համարվել Ընտրական օրենսգրքին և ԿԸՀ-ի որոշումներին փոխարինող փաստաթուղթ:

Ձեռնարկը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի փորձագետների աջակցությամբ՝ «Հայաստանի ընտրական վարչարարության և ժողովրդավարական մշակույթի առաջխաղացում» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն իրականացնում է Ընտրական համակարգերի միջազգային հաստատությունը՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության օժանդակությամբ:

The guidebook is developed with the expert assistance the Central Electoral Commission of the Republic of Armenia within the framework of Advancing Armenia's Election Management and Democratic Culture (AAEM-DC) project,

The AAEM-DC project is supported by the United States Agency for International Development (USAID) and implemented by International Foundation for Electoral Systems (IFES).

## **ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ**

- ՀՀ** Հայաստանի Հանրապետություն
- ԱԺ** Ազգային ժողով
- ԸՕ** Ընտրական օրենսգիրք
- ԿԸՀ** Կենտրոնական ընտրական հանձնաժողով
- ԸԸՀ** Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
- ՏԸՀ** Տեղամասային ընտրական հանձնաժողով
- ՁԼՄ** Ձանգվածային լրատվության միջոց
- ՏԻՄ** Տեղական ինքնակառավարման մարմին

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների տեղը Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգում.....5
2. Պարտականությունների և լիազորությունների բաշխումը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում .....7
3. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նիստերը ..... 9
4. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նիստերին ներկա լինելու իրավունք ունեցող անձանց իրավունքներն ու պարտականությունները..... 12
5. Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուները ..... 13
6. Ընտրական տեղամասերի և տեղամասային կենտրոնների կազմավորում, ընտրական տեղամասերի հերթական համարների սահմանում ..... 21
7. Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորումը.....23
8. Նախընտրական քարոզչության վերահսկողություն .....29
9. Քվեարկության նախապատրաստում..... 30
10. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների արդյունքներն ամփոփելու կարգը .....37

# 1

## ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՏԵՂԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

### 1.1 Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգի կառուցվածքը

Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով ՀՀ-ում կազմավորվում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ կենտրոնական ընտրական հանձնաժողով (այսուհետև՝ ԿԸՀ), ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ (այսուհետև՝ ԸԸՀ) և տեղամասային ընտրական հանձնաժողովներ (այսուհետև՝ ՏԸՀ):

Ընտրական հանձնաժողովները գործում են օրինականության, կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

! ՀՀ տարածքում կազմավորվում են Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորների մանդատների թվին հավասար թվով 41 ընտրատարածք:

Յուրաքանչյուր ընտրատարածքի համար կազմավորվում է 1 ԸԸՀ: ԸԸՀ-ի նստավայրը սահմանում է ԿԸՀ-ն՝ ԱԺ-ի մեծամասնական ընտրատարածքների կազմավորման մասին որոշմամբ:

ԸԸՀ-ներն ունեն ԿԸՀ-ի կողմից հաստատված նմուշին համապատասխան կնիք, կարող են ունենալ ձևաթուղթ, իրենց գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ անհատականացման այլ միջոցներ:

### 1.2 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ կազմավորելու կարգը

! ԸԸՀ-ն ունի 7 անդամ: ԸԸՀ-ն կազմավորվում է 6 տարի ժամկետով: ԸԸՀ-ի անդամներին նշանակում է ԿԸՀ-ն՝ մինչև ԸԸՀ-ի լիազորությունների ավարտը:

ԸԸՀ-ի կազմում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի երկուսից:

ԸԸՀ-ի նախագահներին, հանձնաժողովների նախագահներին տեղակալներին և հանձնաժողովների քարտուղարներին ընտրում են համապատասխան հանձնաժողովներն իրենց կազմերից՝ ԿԸՀ-ի նախագահի, նախագահի տեղակալի և քարտուղարի ընտրության համար սահմանված կարգով:

ԸԸՀ-ի նախագահի, նախագահի տեղակալի կամ հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները համարվում են դադարած, եթե նա ներկայացրել է այդ պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում:

ԸԸՀ-ի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են՝

- եթե չունի հանձնաժողովում նշանակվելու իրավունք,
- եթե հրաժարվում է ստորագրել «Ընտրական հանձնաժողովի անդամի պարտականությունները Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու մասին» պարտավորության տեքստը,
- եթե դատապարտվել է Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքի 149-154.6-րդ հոդվածներով, կամ նրա նկատմամբ որպես պատիժ կիրառվել է կալանք կամ ազատազրկում,
- եթե ներկայացրել է հանձնաժողովի անդամի պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում (այդ դիմումը ներկայացվում է ԿԸՀ-ի նախագահին),
- եթե զորակոչվել է,


- եթե ԸԸՀ-ի անդամը խախտել է ԸՕ-ի դրույթները և ԿԸՀ-ը դիմել է Վարչական դատարան ԸԸՀ անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու պահանջով: Այս դեպքում Վարչական դատարանը կարող է վաղաժամկետ դադարեցնել ԸԸՀ-ի անդամի լիազորությունները,
- եթե ԸԸՀ-ի անդամը 3 օրացուցային ամսվա ընթացքում ԸԸՀ-ի հերթական նիստերից ունի երեք կամ ավելի անհարգելի բացակայություն: Նման դեպքում այդ ԸԸՀ-ն իր անդամների ընդհանուր թվի ճայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ իրավունք ունի վաղաժամկետ դադարեցնելու հանձնաժողովի անդամի լիազորությունները:


ԸԸՀ-ի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում թափուր տեղը համալրում է ԿԸՀ-ն՝ **21-օրյա ժամկետում**:


### 1.3 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի լիազորությունները Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ

ԸԸՀ-ն մշտական հիմունքներով գործող պետական մարմին է: ԸԸՀ-ն՝

- վերահսկողություն է իրականացնում ընտրատարածքում ԸՕ-ի պահանջների կատարման նկատմամբ.
- սահմանում է ընտրական տեղամասերի հերթական համարները՝ ԿԸՀ-ի սահմանած կարգով և այդ տվյալները 2-օրյա ժամկետում ներկայացնում ԿԸՀ.
- իր և ՏԸՀ-ների գործունեության վերաբերյալ տեղեկություններ է հաղորդում ԿԸՀ.
- քննարկում է ՏԸՀ-ների որոշումների և գործողությունների վերաբերյալ ստացված դիմումները (բողոքները), վերանայում կամ վերացնում է ՏԸՀ-ների՝ ԸՕ-ին հակասող որոշումները.
- ըստ ընտրական տեղամասերի՝ ՏԸՀ-ների տվյալների հիման վրա հրապարակում է քվեարկության նախնական արդյունքները.
- հետևում է ընտրողների ցուցակները կազմելուն և համընդհանուր ծանոթացման համար դրանք ընտրական տեղամասերում ներկայացնելուն, այդ նպատակով՝ հետևում է, որ

 լիազոր մարմինը քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին տրամադրի ընտրողների ցուցակի մեկ օրինակ, որի վերջին էջում ներառված լինի տեղեկանք՝ ընտրողների ցուցակներում անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, տեղի, դրանց քննարկման կարգի, ժամանակի և պայմանների մասին և այն **քվեարկության օրվանից 40 օր առաջ** փակցված լինի տեղամասային կենտրոնում,

 լիազոր մարմինը ընտրողների **հիմնական ցուցակները (այդ թվում՝ լրացուցիչ ցուցակները)**՝ ըստ ընտրական տեղամասերի, և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները՝ տպագրված 2 օրինակից (ընտրողների ցուցակների, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների 1-ին օրինակը՝ կազմված մատյանի ձևով, 2-րդ օրինակը՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար), ինչպես նաև ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը **քվեարկության օրվանից 2 օր առաջ** տրամադրած լինի ՏԸՀ-ների նախագահներին:

 Ընտրողների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը, **քվեարկության օրվանից 2 օր առաջ** ՏԸՀ-ի նախագահը փակցրած լինի տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում:



Ընտրողների ցուցակները տեղամասային կենտրոնում մնան փակցված մինչև ՏԸՀ-ի լիազորությունների դադարման օրը:

- վերահսկում է տեղամասային կենտրոնների կահավորումը.
- գրանցում է ԱԺ-ի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուներին, նրանց տալիս ԿԸՀ-ի սահմանած նմուշի վկայական.
- վերահսկողություն է իրականացնում ՏԸՀ-ների կողմից ԸՕ-ի պահանջների կատարման նկատմամբ.
- անվավեր է ճանաչում ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները.
- իրականացնում է ԸՕ-ով նախատեսված այլ լիազորություններ:

## 2

### ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ

#### 2.1

#### Հանձնաժողովի նախագահը

- կազմակերպում և ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները.
- սահմանում է հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը.
- վարում է հանձնաժողովի նիստերը.
- հրավիրում է հանձնաժողովի արտահերթ նիստ.
- պահանջում է հրավիրել ՏԸՀ-ի արտահերթ նիստ.
- անցկացնում է խորհրդակցություններ.
- ստորագրում է հանձնաժողովի որոշումները, նիստերի արձանագրությունները, հանձնաժողովի ելից փաստաթղթերը.
- վերահսկում է հանձնաժողովի ընդունած որոշումների կատարման ընթացքը.
- ներկայացնում է հանձնաժողովը.
- արձանագրում է ՏԸՀ-ի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման փաստը հանձնաժողովի նիստերի արձանագրությունների և որոշումների գրանցամատյանում գրառում կատարելու միջոցով.
- տեղեկություն է հաղորդում ԿԸՀ ՏԸՀ-ի անդամի լիազորությունները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ նրան նշանակած կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ նրան նշանակած հանձնաժողովի նախագահի կամ նրան առաջարկած հանձնաժողովի անդամի պահանջով վաղաժամկետ դադարեցնելու մասին հանձնաժողովի որոշման մասին.
- իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և ԸՕ-ով նախատեսված այլ լիազորություններ:

#### 2.2

#### Հանձնաժողովի նախագահի տեղակալը

- փոխարինում է հանձնաժողովի նախագահին նրա հանձնարարությամբ կամ բացակայության ընթացքում.



- հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ իրականացնում է հանձնաժողովի նախագահին վերապահված որոշակի լիազորություններ.
- ապահովում է հանձնաժողովում ստացված դիմումների, բողոքների հետ տարվող աշխատանքը:

Հանձնաժողովի նախագահի տեղակալի բացակայության ընթացքում նրա լիազորությունները հանձնաժողովի նախագահի կողմից կարող են դրվել հանձնաժողովի քարտուղարի կամ հանձնաժողովի անդամի վրա:

### 2.3 Հանձնաժողովի քարտուղարը

- նախապատրաստում է հանձնաժողովի նիստերը.
- կազմում և ստորագրում է հանձնաժողովի նիստի օրակարգը.
- տեղեկացնում է հանձնաժողովի անդամներին նիստի օրակարգի հարցերի մասին.
- ապահովում է հանձնաժողովի նիստերի հրապարակայնությունը.
- հանձնաժողովի նիստերի օրակարգի մասին տալիս է պարզաբանումներ.
- ստորագրում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.
- կազմակերպում է հանձնաժողովի որոշումների ուղարկումն ըստ պատկանելիության.
- կազմակերպում է ընտրական փաստաթղթերի ստացման, պահպանման և ԸՕ-ով սահմանված դեպքերում՝ արխիվացման աշխատանքները:

ԸԸՀ-ի նախագահի հանձնարարությամբ իրականացնում է հանձնաժողովի նախագահին վերապահված որոշակի լիազորություններ:

Հանձնաժողովի քարտուղարի բացակայության ընթացքում նրա լիազորությունները հանձնաժողովի նախագահի կողմից կարող են դրվել նախագահի տեղակալի կամ հանձնաժողովի անդամի վրա:

ԸԸՀ-ի նախագահը, նախագահի տեղակալը և քարտուղարը կարող են պաշտոնանկ արվել հանձնաժողովի անդամների ձայների ընդհանուր թվի առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ, եթե պատշաճ չեն իրականացնում իրենց վերապահված լիազորությունները:

### 2.4 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամը

#### Իրավունք ունի՝

- նախապես ծանոթանալու հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող հարցերին և փաստաթղթերին.
- ելույթ ունենալու հանձնաժողովի նիստում.
- ներկայացնելու առաջարկություններ և պահանջելու, որ այդ առթիվ անցկացվի քվեարկություն.
- նիստի մասնակիցներին տալու հարցեր, ստանալու պատասխաններ.
- հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու ՏԸՀ-ների նիստերին, իսկ քվեարկության օրը՝ ներկա լինելու քվեարկության սենյակում.
- ծանոթանալու ստացված դիմումներին, բողոքներին, գրություններին և մյուս փաստաթղթերին.
- հայտնել ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման վերաբերյալ իր կարծիքը:

## Պարտավոր է

- իր մասնակցած առաջին նիստում ստորագրել «Ընտրական հանձնաժողովների անդամի պարտականությունները Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու մասին» պարտավորության տեքստը.
- կատարել հանձնաժողովի նախագահի՝ իր իրավասության սահմաններում տված հանձնարարությունները.
- մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին և կատարել իր լիազորությունները.
- մասնակցել հանձնաժողովի նիստերին և քվեարկությանը.
- կազմակերպել հանձնաժողովի քննարկմանն իր կողմից ներկայացվող հարցերի նախապատրաստումը:

### 2.5 ԸԸՀ անդամների գործունեության երաշխիքները

- ԸԸՀ-ի անդամներն ազատվում են զորահավաքներից և վարժական հավաքներից, իսկ համապետական ընտրությունների ժամանակահատվածում՝ նաև զորակոչից.
- ԸԸՀ-ի անդամն աշխատում է մշտական հիմունքներով: Նա չի կարող լինել որևէ կուսակցության անդամ, զբաղվել քաղաքական գործունեությամբ.
- ԸԸՀ-ի անդամը համապետական ընտրությունների ժամանակ կարող է կալանավորվել, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկվել միայն ԿԸՀ-ի համաձայնությամբ.
- ԸԸՀ-ի անդամներն իրենց լիազորությունների իրականացման նպատակով սեփական նախաձեռնությամբ ազատվում են ծառայողական պարտականություններ կատարելուց.
- ԸԸՀ-ի անդամների աշխատավարձը նրանց հիմնական աշխատավայրերում պահպանվում է:

## 3

## ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ

### 3.1 Նիստերի հրավիրման և անցկացման կարգը

ԸԸՀ-ի **հերթական նիստերն** անցկացվում են ԸԸՀ-ի նախագահի սահմանած ժամանակացույցով՝ օրակարգում հարցեր ներառված լինելու դեպքում:

**Արտահերթ նիստ** հրավիրվում է՝

- հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ.
- հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդի գրավոր պահանջով՝ նրանց նշած ժամկետում:

Նիստին հանձնաժողովի անդամների մասնակցությունը նշվում է նիստերի արձանագրությունների և որոշումների գրանցամատյանում, որտեղ յուրաքանչյուրը ստորագրում է իր ազգանվան դիմաց:

Նիստերն անցկացվում են հանձնաժողովի նստավայրում, իսկ անհաղթահարելի խոչընդոտների դեպքում, երբ անհնար է նիստը հետաձգել, հանձնաժողովի անդամների կեսից

ավելիի համաձայնությամբ՝ այլ վայրում:

Նիստերի օրակարգը կազմում է հանձնաժողովի քարտուղարը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ և համաձայնությամբ:

Նիստի օրակարգում լրացուցիչ հարցեր ընդգրկվում են հանձնաժողովի նախագահի կողմից կամ հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդի պահանջով:

### **3.2 ԸԸՀ նիստում քննարկումների կազմակերպման և որոշումների ընդունման կարգը**

ԸԸՀ նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Նիստը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա հանձնարարության կամ բացակայության դեպքում՝ նախագահի տեղակալը:

Նիստը սկսվում է օրակարգի հաստատումով: Մինչև օրակարգի հաստատումն այլ հարցեր չեն քննարկվում: Օրակարգի հարցերի վերաբերյալ առարկություն լինելու դեպքում առաջարկությունը դրվում է քվեարկության:

Նիստ վարողն ընթերցում է օրակարգի հարցերը, անհրաժեշտության դեպքում տալիս պարզաբանումներ, աշխատանքի արդյունավետությունից ելնելով փոխում օրակարգի հարցերի քննարկման հերթականությունը:

Նիստում հարցերը քննարկվում են հետևյալ հաջորդականությամբ՝

- որոշման նախագիծը ներկայացնողի զեկուցում.
- հարցեր զեկուցողին.
- առաջարկություններ.
- ելույթներ՝ մինչև 5 րոպե, իսկ նիստ վարողը՝ մինչև 7 րոպե.
- քվեարկություն:

Նիստ վարողը՝

- ելույթների համար, ըստ հերթականության, ձայն է տալիս հանձնաժողովի անդամներին.
- զգուշացումներ է անում սույն կանոնակարգը խախտողներին.
- ուղղում է ելույթներում տեղ գտած փաստական սխալները.
- ձայն է տալիս հրավիրված անձանց, նիստը խանգարելու դեպքում՝ զրկում խոսքից. նիստը խանգարողներին հեռացնում նիստերի դահլիճից:

Նիստի ընթացքում արված նոր առաջարկությունները գրանցում է հանձնաժողովի քարտուղարը:

Նիստում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկությունը կատարվում է հարցի քննարկման ավարտից հետո:

Նիստ վարողն ամփոփում է քննարկումը և քվեարկությունից առաջ ներկայացնում որոշման նախագծի վերաբերյալ արված դիտողություններն ու առաջարկությունները: Դրանք զեկուցողի կողմից ընդունվելու դեպքում հարցը քվեարկության է դրվում՝ հաշվի առնելով արված դիտողություններն ու առաջարկությունները:

Առաջարկությունները զեկուցողի կողմից չընդունվելու և առաջարկության հեղինակի կողմից ներկայացված տարբերակը պնդելու դեպքում առաջարկություններն առանձին-առանձին դրվում են քվեարկության: Քվեարկության արդյունքում ընդունված առաջարկություններն ընդգրկվում են որոշման նախագծում, և նախագիծը քվեարկության է դրվում ընդունված առաջարկություններով:

Յուրաքանչյուր քվեարկությունից առաջ նիստ վարողը կրկնում է քվեարկության դրվող հարցը՝ ճշգրիտ ձևակերպմամբ, հաշվում և բարձրաձայն հայտարարում կողմ կամ դեմ քվեարկած հանձնաժողովի անդամների թիվը:

Քվեարկությունը կարող է կրկնվել, եթե ինչ որ կերպ խանգարվել է հանձնաժողովի որևէ անդամի քվեարկությունը:

Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի իրավազոր նիստում՝ բաց քվեարկությամբ: Հանձնաժողովի անդամը քվեարկում է անձամբ՝ կողմ կամ դեմ:

Որոշումն ընդունվում է, եթե կողմ է քվեարկել նիստին ներկա հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին, բացառությամբ.

- ԸԸՀ-ի նախագահին, նախագահի տեղակալին, հանձնաժողովի քարտուղարին պաշտոնանկ անելու մասին որոշման (43 հոդված, 1-ին մաս),
- Երեք օրացուցային ամսվա ընթացքում ԸԸՀ-ի հերթական նիստերից երեք կամ ավելի անհարգելի բացակայության հիմքով ԸԸՀ-ի նախագահի, նախագահի տեղակալի, հանձնաժողովի քարտուղարի և հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշման (43 հոդված, 6-րդ մաս),
- ԱԺ-ի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուի գրանցումը մերժելու մասին որոշման (116 հոդված, 2-րդ մաս),
- Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուի գրանցումն անվավեր ճանաչելու մասին որոշման (117 հոդված, 2-րդ մաս):

Քվեարկության արդյունքների հիման վրա նիստ վարողը հայտարարում է որոշումն ընդունվելու կամ չընդունվելու մասին:

ԸԸՀ-ն իր լիազորությունների շրջանակներում ընդունում է անհատական որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման:

ԸԸՀ-ի կողմից ընդունվող որոշումը հանդիսանում է անհատական որոշում և այն պետք է ունենա հերթական համար, որից հետո պետք է նշվի «Ա» տառը (անհատական):

Որոշումը պետք է ունենա վերնագիր, որը գրվում է մեծատառերով: Վերնագրի վերջում որևէ կետադրական նշան չի դրվում:

ԸԸՀ-ի որոշումը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

- Նկարագրական մաս. գրվում է դիմումի (բողոքի) ներկայացման նախապատմությունը և դիմումատուի (բողոքաբերի) դիրքորոշումը,
- Պատճառաբանական մաս. գրվում է գործի փաստերը, իրավական հարցերը (խնդիրները) և վերլուծությունը,
- Եզրափակիչ մաս. գրվում է դիմումի (բողոքի) վերաբերյալ ԸԸՀ-ի վերջնական եզրակացությունը:

Նիստը համառոտ արձանագրվում է:



## ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻՆ ՆԵՐԿԱ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԸԸՀ-ի նիստերին կարող են ներկա լինել՝

- ԶԼՄ-ների ներկայացուցիչները.
  - ◆ ԸԸՀ-ում ստուգվում է ԶԼՄ-ի կողմից ԶԼՄ ներկայացուցիչներին տրված՝ իրենց կարգավիճակը հավաստող վկայականը, դրա առկայության դեպքում թույլատրվում ներկա լինել ԸԸՀ-ի նիստին:
  - ◆ ԸԸՀ նիստերին իրավունք ունի միաժամանակ ներկա լինել յուրաքանչյուր լրատվության միջոցը ներկայացնող ոչ ավելի, քան 1 լրագրող և 1 լուսանկարիչ կամ տեսաձայնագրման 1 օպերատոր:
- միջազգային և տեղական դիտորդները: Տեղական դիտորդը նիստին կարող է ներկա լինել, եթե դիտորդի վկայականից բացի ունի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման կամ դիտորդական առաքելություն իրականացնելու վկայական:



### Ուշադրություն

Միայն այս 2 վկայականների միաժամանակյա առկայության և համապատասխան հանձնաժողովին ներկայացնելու դեպքում է, որ տեղական դիտորդն իրավունք է ստանում ներկա լինել ԸԸՀ-ի նիստերին:

- հանձնաժողովի կողմից հրավիրված անձինք.
- ԱԺ-ի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուն կամ նրա լիազոր ներկայացուցիչը, թեկնածուի գրանցման հարցը քննարկելիս, իսկ գրանցումից հետո՝ յուրաքանչյուր թեկնածուի, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների մեկական վստահված անձ.
- դիմումատուն (բողոք ներկայացնողը)՝ իր դիմումի (բողոքի) քննարկման ժամանակ:



### Ուշադրություն

ԸԸՀ-ի նիստին ներկա լինելու իրավունք ունեցող անձինք (վստահված անձ, դիտորդ, ԶԼՄ ներկայացուցիչ, ԿԸՀ անդամ) **վերնագրեստի վրա պարտադիր կարգով տեսանելի ձևով կրում են** նիստին ներկա լինելու իրավունքը հավաստող վկայական:

Նիստում ներկա լինելու իրավունք ունեցող անձինք կարող են մասնակցել համապատասխան հարցի քննարկմանը միայն նիստը վարողի թույլտվությամբ:

Վստահված անձը և դիտորդն իրավունք ունեն՝

- ներկա լինել ԸԸՀ-ի նիստերին, միայն վստահված անձը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,
- անարգել ծանոթանալու ԸԸՀ-ի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, որոշումներին, նիստերի արձանագրություններին, ստանալու դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքներ՝
- քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ (եթե հանդիսանում է դիմող կողմ) ծանոթանալու ընտրական փաստաթղթերին, ընտրողների ստորագրած ցուցակներին, ինքնուրույն կատարելու քաղվածքներ՝ առանց դրանք լուսապատճեն

նահանելու, լուսանկարելու և տեսանկարահանելու իրավունքի.

- ԸՕ-ով սահմանված կարգով և դեպքերում բողոքարկելու հանձնաժողովների որոշումները, գործողությունները, անգործությունը (տես՝ Վարչական վարույթի ձեռնարկը).
- քվեարկության նախորդ օրը ԸԸՀ-ում հետևել քվեաթերթիկները ՏԸՀ-ներին հատկացնելու գործընթացին,
- իրականացնելու ԸՕ-ով իրեն վերապահված այլ լիազորություններ:

ԸԸՀ-ի նիստերը (վերահաշվարկի աշխատանքները) վստահված անձինք, դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են լուսանկարահանել, տեսանկարահանել՝ չխախտելով ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը:

Վստահված անձի ԸՕ-ով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում: Ոչ ոք (այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները) իրավունք չունի վստահված անձանց դուրս հանելու քվեարկության սենյակից կամ այլ կերպ նրանց մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա լինելուց, բացառությամբ նրանց ձերբակալելու կամ կալանավորելու դեպքերի:

### **Վստահված անձը պարտավոր է պահպանել ԸՕ-ի պահանջները:**

ԶԼՄ-ների ներկայացուցիչներն իրավունքն ունեն՝

- ՀՀ օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկատվություն.
- նախապես ծանուցվել ընտրական հանձնաժողովների իրականացրած միջոցառումների մասին և ծանոթանալ տեղեկատվական նյութերին.
- ՀՀ օրենքով սահմանված կարգով մասնակցել ընտրական միջոցառումներին.
- քվեարկության նախորդ օրը ԸԸՀ-ում հետևել քվեաթերթիկները ՏԸՀ-ներին հատկացնելու գործընթացին.
- բոլոր լրագրողների համար ապահովվում է ոչ խտրական պայմաններ. օգտվել հավատարմագրված լրագրողների համար սահմանված հավասար պայմաններից:

# 5

## **ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ**

### 5.1

#### **Պատգամավորի թեկնածու առաջադրելու իրավունքը**

ԱԺ-ի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, այլ պետության քաղաքացի չհանդիսացող, վերջին հինգ տարում ՀՀ քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:

ԱԺ մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուն կարող է առաջադրվել միայն մեկ մեծամասնական ընտրատարածքում:

ԱԺ-ի պատգամավորի թեկնածու չեն կարող առաջադրվել սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, դատախազները, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, դատական ակտերի հարկադիր կատարման, փրկարարական, հարկային, մաքսային մարմիններում, քրեակատարողական հիմնարկներում ծառայողները, զինծառայողները:

ԱԺ-ի պատգամավորի թեկնածու չեն կարող առաջադրվել և պատգամավորի թեկնածու չեն կարող գրանցվել ՀՀ այն քաղաքացիները, որոնք ունեն այլ պետության քաղաքացիություն:

Պետական և ՏԻՄ աշխատակիցներն ԱԺ-ի պատգամավորի թեկնածու գրանցվելուց հետո մինչև նախընտրական քարոզչության ավարտը ժամանակավորապես ազատվում են իրենց աշխատանքային պարտականությունները կատարելուց, բացառությամբ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց:

## 5.2 Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու առաջադրումը

ԱԺ-ի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու առաջադրելու իրավունք ունեն կուսակցությունները և քաղաքացիները՝ ինքնաառաջադրման միջոցով:

ԱԺ-ի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուների գրանցման փաստաթղթերն ԸԸՀ են ներկայացվում քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 55, և ոչ ուշ, քան 45 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ը:

Կուսակցությունն ԱԺ-ի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուի առաջադրումն իրականացնում է իր մշտապես գործող մարմնի որոշմամբ: Կուսակցությունը յուրաքանչյուր ընտրատարածքում իրավունք ունի առաջադրելու պատգամավորի մեկ թեկնածու: Կուսակցությունը կարող է պատգամավորի թեկնածու առաջադրել նաև իր կուսակցության անդամ չհանդիսացող անձի:

ԱԺ-ի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու առաջադրելու մասին կուսակցության որոշումը ներկայացվում է ԿԸՀ սահմանված օրինակելի ձևին համապատասխան՝ կից գրությամբ.

*կից գրության օրինակելի ձև*

<b>ԹԻՎ ___ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ</b>	
N _____	
«___» _____ 20 թ.	
<p>Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 114-րդ և 115-րդ հոդվածների համաձայն՝ ներկայացվում է թիվ ___ ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուի գրանցման համար պահանջվող հետևյալ փաստաթղթերը.</p>	
1) _____ կուսակցության _____	<small>նշվում է մշտապես գործող մարմնի անվանումը</small>
20 թ. _____ «___»-ի «Թիվ ___ ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու առաջադրելու մասին» N _____ որոշումը,	
2) տեղեկանք թեկնածուի՝ վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, այլ պետության քաղաքացի չհանդիսանալու և վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին.	
3) թեկնածուի գրավոր հայտարարությունը՝ թիվ _____ ընտրատարածքում պատգամավորի թեկնածու գրանցվելու համաձայնության մասին,	
4) թեկնածուի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,	
5) նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի չափով ընտրական գրավի մուծման անդորրագիրը:	
Առդիր՝ _____ թերթ:	_____
	<small>Իրավասու անձի անուն, ազգանուն, սպորազրություն</small>

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

նշվում է մշտապես գործող մարմնի անվանումը

N \_\_\_\_\_

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 թ.

20 թվապահի \_\_\_\_\_ « \_\_\_\_ » -ի ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ  
ԹԻՎ \_\_\_\_\_ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ  
ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 114-րդ և 115-րդ հոդվածներով՝ կուսակցության \_\_\_\_\_

նշվում է կուսակցության անվանումը

նշվում է մշտապես գործող մարմնի անվանումը

որոշում է.

1. Ազգային ժողովի 20 թվականի \_\_\_\_\_ « \_\_\_\_ »-ի ընտրություններին թիվ \_\_\_\_\_ ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով, որպես պատգամավորի թեկնածու առաջադրել՝

ազգանունը, անունը, հայրանունը

ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը

հաշվառման վայրը

աշխատանքի վայրը և պաշտոնը (զբաղմունքը)

կուսակցական պարկանելիությունը

Թեկնածուի լիազորն երկայացուցիչներն են՝

1) \_\_\_\_\_  
ազգանունը, անունը, հայրանունը

Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը՝ \_\_\_\_\_

Անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը՝ \_\_\_\_\_

Աշխատանքի վայրը և պաշտոնը (զբաղմունքը)՝ \_\_\_\_\_

2) \_\_\_\_\_  
ազգանունը, անունը, հայրանունը

Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը՝ \_\_\_\_\_

Անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը՝ \_\_\_\_\_

Աշխատանքի վայրը և պաշտոնը (զբաղմունքը)՝ \_\_\_\_\_

որոշումն ստորագրելու իրավասու անձի անուն, ազգանուն և ստորագրություն

Կ.Տ



Կուսակցության որոշմանը կից ԸԸՀ են ներկայացվում նաև՝

- թեկնածուի գրավոր հայտարարությունը՝ տվյալ ընտրատարածքում պատգամավորի թեկնածու գրանցվելու համաձայնության մասին.

Օրինակելի ձև

<b>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</b>	
Ես՝ _____	<small>անունը, հայրանունը, ազգանունը</small>
<p>տալիս եմ իմ համաձայնությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 20 թվականի _____ «___»-ի ընտրություններին թիվ ___ ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու գրանցվելու համար:</p>	
	<small>ստորագրություն</small>
	«___» _____ 20 թ.

- նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի (1մլն դրամի) չափով ընտրական գրավի մուծման անդորրագիրը.
- տեղեկանք թեկնածուի՝ վերջին հինգ տարում ՀՀ քաղաքացի հանդիսանալու, այլ պետության քաղաքացի չհանդիսանալու և վերջին հինգ տարում ՀՀ-ում մշտապես բնակվելու մասին.
- թեկնածուի անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

Ինքնաառաջադրման դեպքում քաղաքացին ներկայացնում է դիմում ինքնաառաջադրման մասին՝ **վավերացված նոտարական կարգով:**

Ինքնաառաջադրման մասին դիմումի օրինակելի ձև

<b>ԹԻՎ ___ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ</b>	
<b>ԴԻՄՈՒՄ</b>	
<p>Ազգային ժողովի ընտրություններին մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուի ինքնաառաջադրման մասին</p>	
Ես՝ _____	<small>անունը, հայրանունը, ազգանունը</small>
Ծնված _____	<small>ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը</small>
Բնակվող _____	<small>նշվում է հաշվառման վայրը</small>
աշխատանքի վայրը և պաշտոնը (զբաղմունքը) _____	<small>կուսակցական պարկանելությունը</small>
<p>Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 114-րդ և 115-րդ հոդվածների համաձայն՝ 20 թ. _____ «___» -ի Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրություններին թիվ ___ ընտրատարածքում ինքնաառաջադրման միջոցով առաջադրում եմ իմ թեկնածությունը:</p>	

Իմ լիազոր ներկայացուցիչներն են՝

1) \_\_\_\_\_  
*ազգանունը, անունը, հայրանունը*

Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը՝ \_\_\_\_\_

Անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը՝ \_\_\_\_\_

Աշխատանքի վայրը և պաշտոնը (զբաղմունքը)՝ \_\_\_\_\_

2) \_\_\_\_\_  
*ազգանունը, անունը, հայրանունը*

Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը՝ \_\_\_\_\_

Անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը՝ \_\_\_\_\_

Աշխատանքի վայրը և պաշտոնը (զբաղմունքը)՝ \_\_\_\_\_

Կից ներկայացվում են՝

1. տեղեկանք՝ վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, այլ պետության քաղաքացի չհանդիսանալու և վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին.

2. անձը հաստատող փաստաթղթի պատճենը,


3. նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի չափով ընտրական գրավի մուծման անդորրագիրը:

Առդիր՝ \_\_\_\_\_ թերթ:

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 \_\_\_\_\_ թ.

Ինքնաառաջադրման մասին դիմումին կից ԸԸՀ են ներկայացվում նաև՝

- նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի (1մլն դրամի) չափով ընտրական գրավի մուծման անդորրագիրը.
- տեղեկանք թեկնածուի՝ վերջին հինգ տարում ՀՀ քաղաքացի հանդիսանալու, այլ պետության քաղաքացի չհանդիսանալու և վերջին հինգ տարում ՀՀ-ում մշտապես բնակվելու մասին.
- թեկնածուի անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

 **Փաստաթղթերը ԸԸՀ ներկայացվում է միայն թեկնածուի կամ նրա լիազոր ներկայացուցչի միջոցով:**

Պատգամավորի թեկնածու գրանցվելու համար ներկայացրած փաստաթղթերում սխալներ, ջնջումներ, քերվածքներ, վրիպակներ հայտնաբերելու դեպքում ԸԸՀ-ը պարտավոր է այդ փաստաթղթերը ներկայացնողների ուշադրությունը հրավիրել դրանց վրա՝ շտկելու նպատակով, ինչպես նաև նրանց ներկայությամբ ինքնուրույն ուղղել ներկայացված փաստաթղթերում առկա ակնհայտ սխալները, վրիպակները:

Հանձնաժողովն իրավունք չունի չընդունելու ներկայացված փաստաթղթերը միայն այն պատճառով, որ դրանք պարունակում են նման սխալներ, ջնջումներ, քերվածքներ կամ վրիպակներ:

ԸԸՀ-ն իրավունք չունի ինքնուրույն ուղղել ներկայացված փաստաթղթերում առկա այն սխալները, ջնջումները, քերվածքները, վրիպակները կամ այլ թերությունները, եթե դրանք շտկելու կամ թերությունները վերացնելու իրավունքն օրենքով վերապահված է այդ փաստաթղթերն ընդունած կամ տրամադրած մարմիններին:

Ներկայացված փաստաթղթերում նշված անճշտություններ կամ դիմումին կից ներկայացված փաստաթղթերի թերի լինելու դեպքում ԸԸՀ-ը 48 ժամ է տալիս նշված անճշտությունները վերացնելու, կից ներկայացված փաստաթղթերը լրացնելու համար: Այդ ժամանակահատվածում անճշտությունները չվերացնելու կամ փաստաթղթերը չլրացնելու դեպքում թեկնածուի գրանցումը մերժվում է:

### 5.3 Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորի թեկնածուի գրանցումը

ԱԺ-ի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուների գրանցումը կատարվում է քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45, և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ը:

Թեկնածուի գրանցման հարցը քննարկելիս ԸԸՀ-ի նիստին իրավունք ունեն ներկա լինելու առաջադրված թեկնածուն և լիազոր ներկայացուցիչը:

ԱԺ-ի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուները գրանցվում են ԸԸՀ-ի որոշմամբ:

ԸԸՀ-ի անդամների կողմից գրանցման վերաբերյալ առարկություն չլինելու դեպքում թեկնածուն գրանցվում է առանց քվեարկության:

Որոշման օրինակելի ձև

<b>ԹԻՎ _____ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ N _____-Ա</b>
« _____ » _____ 2012թ.
ք. _____
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ</b>
2012 թ. _____ « _____ » -ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ _____ ԻՆ ԹԻՎ _____ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, 105-րդ հոդվածով և 115-րդ հոդվածի 6-րդ մասով և <u>հաշվի առնելով, որ հանձնաժողովի անդամների կողմից թեկնածուի գրանցման վերաբերյալ առարկություն չի ներկայացվել՝</u> թիվ _____ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը
<b>ՈՐՈՇՈՒՄ Է</b>
1. _____ -ին համարել գրանցված, որպես Ազգային ժողովի <i>Նշվում է անունը, հայրանունը, ազգանունը</i>
մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու՝ թիվ _____ ընտրատարածքում:
Թիվ _____ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ
Կ.Տ

Թեկնածուի գրանցման վերաբերյալ հանձնաժողովի անդամի առարկության դեպքում առարկությունը դրվում է քվեարկության:

Եթե առարկությունը քվեարկության արդյունքում չի ստանում ԸԸՀ անդամների ընդհանուր ձայների երկու երրորդը (առնվազն 5 կողմ ձայն), ապա թեկնածուն համարվում է գրանցված:

Որոշման օրինակելի ձև

**ԹԻՎ \_\_\_\_ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ N \_\_\_\_-Ա**

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2012թ.  
ք. \_\_\_\_\_

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ**  
2012 թ. \_\_\_\_\_ « \_\_\_\_ » -ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ \_\_\_\_\_ ԻՆ ԹԻՎ \_\_\_\_\_  
ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԵԾԱՄԱՏՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, 105-րդ հոդվածով և 115-րդ հոդվածի 6-րդ մասով՝ թիվ \_\_\_\_ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. \_\_\_\_\_ -ին համարել գրանցված, որպես Ազգային ժողովի  
*Նշվում է անունը, հայրանունը, ազգանունը*

մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու՝ թիվ \_\_\_\_\_ ընտրատարածքում:

Թիվ \_\_\_\_ ընտրատարածքային  
ընտրական հանձնաժողովի նախագահ Կ.Տ

◆ Թեկնածուներին գրանցելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, գրանցում իրականացրած ԸԸՀ-ը մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուի լիազոր ներկայացուցչին տալիս է կազմավորված ընտրական տեղամասերի թվի եռապատիկին հավասար թվով վստահված անձանց վկայականներ: ԸԸՀ-ը վկայականում նշում է թեկնածուի անունը, հայրանունը, ազգանունը: Թեկնածուն կամ նրա լիազոր ներկայացուցիչը վկայականները լրացնում և տրամադրում է վստահված անձանց:

**5.4 Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորի թեկնածուի գրանցումը մերժելը**

ԸԸՀ-ը պատգամավորի թեկնածուի գրանցումը **մերժում է**, եթե՝

- 1. չունի ընտրվելու իրավունք.
- 2. ներկայացված փաստաթղթերը թերի են կամ կեղծված:

Գրանցումը մերժվում է ԸԸՀ-ի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով (առնվազն 5 կողմ ձայն):

**ԹԻՎ \_\_\_\_ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ  
ՈՐՈՇՈՒՄ N \_\_\_\_-Ա**

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2012թ.

ք. \_\_\_\_\_

Թիվ \_\_\_\_\_ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՈՐՊԵՍ  
ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ \_\_\_\_\_-Ի ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասի \_\_\_\_ կետով, շարադրվում է **պատճառաբանական մաս** (գործի փաստերը, իրավական հարցերը (խնդիրները), վերլուծությունը) \_\_\_\_\_՝ թիվ \_\_\_\_ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Մերժել Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով, թիվ \_\_\_\_ ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու առաջադրված \_\_\_\_\_ -ի գրանցումը:

*Նշվում է անունը, հայրանունը, ազգանունը*

Թիվ \_\_\_\_ ընտրատարածքային  
ընտրական հանձնաժողովի նախագահ Կ.Տ

**5.5 Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորի թեկնածուի գրանցումը անվավեր ճանաչելը**

ԸԸՀ-ը պատգամավորի թեկնածուի գրանցումը **ճանաչում է անվավեր**, եթե գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, որոնց ուժով պատգամավորի թեկնածուն՝

- 1. չունի ընտրվելու իրավունք.
- 2. ներկայացված փաստաթղթերը կեղծված են:

Թեկնածուի գրանցումը ճանաչվում է անվավեր ԸԸՀ-ի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով ընդունված որոշմամբ (առնվազն 5 կողմ ձայն):

**ԹԻՎ \_\_\_\_ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ  
ՈՐՈՇՈՒՄ N \_\_\_\_-Ա**

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2012թ.

ք. \_\_\_\_\_

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ**

2012 թ. \_\_\_\_\_ « \_\_\_\_ » -ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ \_\_\_\_\_ ԻՆ ԹԻՎ \_\_\_\_\_  
ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ  
ԳՐԱՆՑՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասի \_\_\_\_ կետով, (շարադրվում է պատճառաբանական մաս. գործի փաստեր, իրավական հարցերը (խնդիրները), վերլուծությունը) \_\_\_\_\_՝ թիվ \_\_\_\_ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

## ՈՐՈՇՈՒՄ Է

1. Թիվ \_\_\_\_\_ ընտրատարածքի Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու \_\_\_\_\_-ի գրանցումը ճանաչել անվավեր:  
*Նշվում է անունը, հայրանունը, ազգանունը*

Թիվ \_\_\_\_\_ ընտրատարածքային  
ընտրական հանձնաժողովի նախագահ

Կ.Տ



### Ուշադրություն

Եթե ԱԺ-ի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուն ներկայացրել է ինքնաբացարկի մասին դիմում, ապա պատգամավորի թեկնածուի գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ:



## ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄ, ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

### 6.1 Ընտրական տեղամասեր

Լիազոր մարմինը համայնքի ղեկավարի և ԸԸՀ-ի անդամի մասնակցությամբ կազմավորում է ընտրական տեղամասեր **քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ**՝ հաշվի առնելով տեղական և այլ պայմաններ, նպատակ ունենալով առավել նպաստավոր պայմաններ ստեղծել քվեարկության համար:

Ընտրական տեղամասը կազմավորման պահին չպետք է ունենա ավելի քան 2000 ընտրող: Այս թիվը կարող է փոփոխվել ընտրողների ցուցակների ճշգրտման և ԸՕ-ի օրենսգրքի 8-րդ հոդվածով նախատեսված դեպքերում:

Ընտրական տեղամասը չի կարող ընդգրկել տարբեր բնակավայրեր:

### 6.2 Տեղամասային կենտրոն

Քվեարկությունն անցկացվում է **տեղամասային կենտրոնում**:

Տեղամասային կենտրոնը պետք է հնարավորին չափ մոտ լինի ընտրական տեղամասում գտնվող բնակելի շենքերին և տներին: Տեղամասային կենտրոնը պետք է ընտրվի այնպես, որ ապահովվի քվեարկության բնականոն ընթացքը:



Տեղամասային կենտրոնը չի կարող գտնվել **պետական և ՏԻՄ-երի, ռազմական ուսումնական հաստատությունների, զորամիավորումների և առողջապահության հիմնարկների զբաղեցրած շենքերում**:

Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ տեղամասային կենտրոններ կազմավորվում են նաև կալանավորված անձանց պահելու վայրերում:

ՏԻՄ-երը սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրականացման մատչելիությունն ապահովելու համար տեղամասային կենտրոններում ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ:

### 6.3 Տեղամասային կենտրոն սահմանելը

Համայնքի ղեկավարը (նաև քրեակատարողական հիմնարկի ղեկավարը) **քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ սահմանում է տեղամասային կենտրոն:** Համայնքի ղեկավարը այդ մասին տեղեկացնում է լիազոր մարմնին, **համապատասխան ԸԸՀ-ին** և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

Տեղամասային կենտրոնում քվեարկության պատշաճ կազմակերպման կամ քվեարկության անցկացման անհնարինության դեպքում համայնքի ղեկավարը պարտավոր է քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ **ԸԸՀ-ի նախագահի պահանջով** փոխել տեղամասային կենտրոնի գտնվելու տեղը, իսկ բացառիկ դեպքերում (տարերային աղետ, վթար, հրդեհ կամ անհաղթահարելի ուժ)՝ նաև քվեարկության օրը՝ **ԸԸՀ-ի նախագահի համաձայնությամբ:**

Տեղամասային կենտրոնի գտնվելու վայրը փոխելու դեպքում համայնքի ղեկավարն ընտրողներին տեղեկացնում է անհապաղ:

### 6.4 Ընտրական տեղամասերի հերթական համարների սահմանում

Ընտրական տեղամասերը համարակալում են ԸԸՀ-ները՝ *m/n* տեսքի թվազույգով, որտեղ *m*-ը համապատասխան ընտրատարածքի համարն է, իսկ *n*-ը՝ ընտրական տեղամասի հերթական համարը: Ընտրական տեղամասերը համարակալելիս նշվում է նաև տեղամասի գտնվելու վայրի (համայնքի) անվանումը: Աժ-ի ընտրությունների դեպքում ընտրական տեղամասերը համարակալվում են ըստ ընտրատարածքների: Յուրաքանչյուր ընտրատարածքում ընտրական տեղամասերի համարակալումը կատարվում է սկսած 1-ից՝ մինչև տվյալ ընտրատարածքի հերթական վերջին ընտրական տեղամասը:

ԸԸՀ-ը սահմանում է ընտրական տեղամասերի հերթական համարները այդ տվյալները երկօրյա ժամկետում ներկայացնում ԿԸՀ: Որոշումը ներկայացվում է կից գրությամբ:

*Կից գրության օրինակելի ձև*

N _____	Հայաստանի Հանրապետության
« _____ » _____ 2012 թ.	կենտրոնական ընտրական հանձնաժողովի
	նախագահ պարոն _____
	<i>անուն, ազգանուն</i>
Հարգելի պարոն _____	
Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն կից ներկայացվում է թիվ _____ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 00.00.11թ. թիվ _____ Ա որոշումը՝ թիվ _____ ընտրատարածքի ընտրական տեղամասերի հերթական համարները սահմանելու մասին:	
Առդիր՝ _____ թերթ:	
Թիվ _____ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ	

**ԹԻՎ \_\_\_\_ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ N \_\_\_\_-Ա**

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2012թ.

ք. \_\_\_\_\_

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ**

2012 թ. \_\_\_\_\_ « \_\_\_\_ » -ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎ \_\_\_\_ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԻ  
ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2011թ. հունիսի 30-ի «Ընտրական տեղամասերի համարակալման կարգը սահմանելու մասին» N 13-Ն որոշմամբ՝ թիվ \_\_\_\_ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

**ՈՐՈՇՈՒՄԷ.**

1. Սահմանել Ազգային ժողովի 2012 թվականի \_\_\_\_\_ « \_\_\_\_ » - ին կայանալիք ընտրությունների, թիվ \_\_\_\_ ընտրատարածքի ընտրական տեղամասերի հերթական համարները՝

ԸՏ-ի Հ/Հ	Համայնքի անվանումը	Գտնվելու վայրը
00/01	_____ համայնքի	_____ շենք
00/02	_____ համայնքի	_____ շենք
00/03	_____ համայնքի	_____ շենք
00/04	_____ համայնքի	_____ շենք
00/05	_____ համայնքի	_____ շենք

2. Սույն որոշումն երկօրյա ժամկետում ներկայացնել կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Թիվ \_\_\_\_ ընտրատարածքային  
ընտրական հանձնաժողովի նախագահ

Կ.Տ



**ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ  
ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ**



**7.1 ՏԸՀ-ի անդամների նշանակման կարգը**

ՏԸՀ-ն ունի առնվազն 7անդամ:

ՏԸՀ-ում անդամ նշանակում են՝

1. Աժ-ում խմբակցություն ունեցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները՝ 1-ական անդամ.

Ազգային ժողովի 2012 թվականի ընտրությունների ժամանակ այդ կուսակցություններն են՝

- ◆ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը,
- ◆ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը,



- ◆ «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցությունը,
- ◆ «Օրինաց Երկիր» կուսակցությունը,
- ◆ «Ժառանգություն» կուսակցությունը:

2. համապատասխան ԸԸՀ-ը՝ 2 անդամ:

ԸԸՀ-ի կողմից նշանակվող երկու անդամներին նշանակելու համար ԸԸՀ-ի յուրաքանչյուր անդամ (բացառությամբ հանձնաժողովի նախագահի) կարող է ներկայացնել մեկ թեկնածու: ՏԸՀ-ում անդամներ նշանակելու մասին հայտերը ներկայացվում են **քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ը:**

ԸԸՀ-ի անդամների՝ ՏԸՀ-ի անդամի թեկնածու ներկայացնելու հայտերի հիման վրա թեկնածուների ազգանունները, անունները և որակավորման վկայականների համարները ԸԸՀ-ում մուտքագրում են «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի ՏԸՀ-ների կազմավորման համար նախատեսված դաշտում: ՀՀ ԸՕ-ով ՏԸՀ-ում անդամներ նշանակելու մասին հայտերը ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով տպագրվում է ՏԸՀ-ի կազմը:

ՏԸՀ-ի նախագահը և քարտուղարը նշանակվում են համապատասխան ԸԸՀ-ի որոշմամբ՝ ԿԸՀ որոշմամբ իրականացված բաշխմանը համապատասխան, հանձնաժողովում կուսակցությունների նշանակած անդամներից:



**Ուշադրություն**

ԸԸՀ-ը հրապարակում է տեղեկություն ընտրատարածքում կազմավորված ՏԸՀ-ների կազմերի վերաբերյալ ՏԸՀ-ների կազմավորման օրվանից ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում ԸԸՀ-ում հայտարարություն փակցնելու միջոցով, որտեղ նշվում է ՏԸՀ անդամի ազգանունը, անունը, հայրանունը, ՏԸՀ-ում զբաղեցրած պաշտոնը և ընտրական հանձնաժողովի կազմում ընդգրկվելու որակավորման վկայականի համարը:

ԸԸՀ-ի անդամների կողմից որևէ ՏԸՀ-ում նշանակելու համար ներկայացրած թեկնածուների թիվը երկուսից ավելի լինելու դեպքում թեկնածուների ազգանունները, անունները և որակավորման վկայականների համարները «Ընտրություններ» ավտոմատացված համակարգ մուտքագրելուց հետո «Ընտրություններ» ավտոմատացված համակարգը պատահական ընտրությամբ առանձնացնում է ՏԸՀ-ի անդամի այն երկու թեկնածուներին, որոնք ընդգրկվում են ՏԸՀ-ի կազմում:

Եթե ՏԸՀ-ի ձևավորման համար ԸՕ-ով սահմանված կարգով կամ ժամկետում որևէ կուսակցություն հանձնաժողովի անդամ չի նշանակում, կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների առաջարկած թեկնածուների թիվը պակաս է 2-ից, ապա հանձնաժողովի թափուր տեղերը նրանց փոխարեն լրացնում է համապատասխան ԸԸՀ-ի նախագահը հանձնաժողովի կազմավորման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ **եռօրյա ժամկետում:**

Այս դեպքում «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի համապատասխան դաշտում մուտքագրվում են ԸԸՀ-ի նախագահի նշանակած անդամի տվյալները:

ՏԸՀ-ի թափուր տեղերը լրացվելու դեպքում ՏԸՀ-ների նախագահների և քարտուղարների՝ ըստ տեղամասերի բաշխման մասին ԿԸՀ-ի որոշումը չի փոփոխվում:

**ԹԻՎ \_\_\_\_ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՈՐՈՇՈՒՄ N \_\_\_\_-Ա**

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2012թ.  
\_\_\_\_\_ -ի ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 42-րդ հոդվածի 3-րդ մասով,

1. Թիվ \_\_\_\_ ընտրատարածքի թիվ \_\_\_\_ / \_\_\_\_ տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում \_\_\_\_\_ կուսակցության (կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների առաջարկած թեկնածուների թիվը պակաս է 2-ից) կողմից հանձնաժողովի անդամ չի նշանակվել:
2. Հանձնաժողովի թափուր տեղը լրացնել և թիվ \_\_\_\_ ընտրատարածքի թիվ \_\_\_\_ / \_\_\_\_ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ (նախագահ, քարտուղար) նշանակել \_\_\_\_\_ -ին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Թիվ \_\_\_\_ ընտրատարածքային  
ընտրական հանձնաժողովի նախագահ Կ.Տ

ԸԸՀ նախագահի կողմից ՏԸՀ-ի կազմում նշանակում կատարելուց հետո պետք է ԸԸՀ-ը համապատասխան լրացում կատարի «ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշման մեջ:

**! ՏԸՀ-ի առաջին նիստը տեղամասային կենտրոնում հրավիրվում է հանձնաժողովի կազմավորման օրվանից հետո՝ 3-րդ օրը, ժամը 12.00-ին:**

**ՏԸՀ-ի առաջին նիստերն անցկացման համար ԸԸՀ-ը ՏԸՀ-ի նախագահին տրամադրում է՝**

- ՏԸՀ-ի կազմի վերաբերյալ տեղեկություն,
- ՏԸՀ-ի գրանցամատյանը,
- ՏԸՀ-ի նախագահի, քարտուղարի և անդամների վկայականները,
- ՀՀ ընտրական օրենսգիրք,
- ԿԸՀ որոշումների ժողովածուն:

**7.2 ՏԸՀ-ի անդամների լիազորությունների դադարում կամ դադարեցում**

ՏԸՀ-ի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում թափուր տեղը համալրվում է ՏԸՀ կազմավորման համար ԸՕ-ով սահմանված կարգով՝ լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման մասին համապատասխան փաստաթուղթը ԸԸՀ-ում ստանալուց (մուտքագրվելուց) հետո 7-օրյա ժամկետում, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ:

ՏԸՀ անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարման կամ դադարեցման հիմքերն են՝

- ՏԸՀ-ի անդամի պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմումը.
- ՏԸՀ-ի նախագահը կամ քարտուղարը այդ պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմումը , որը կարող է ներկայացվել քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ մինչև ժամը 18.00-ը՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին.

- ՏԸՀ-ում անդամ նշանակած կուսակցության կամ ԸԸՀ-ի նախագահի կամ ՏԸՀ անդամին առաջարկած ԸԸՀ-ի անդամի պահանջը: Նման պահանջ կարող է ներկայացվել ԸԸՀ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ, եթե ՏԸՀ անդամը խախտել է ԸՕ-ի դրույթները:

ՏԸՀ-ի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման փաստն արձանագրում է ԸԸՀ-ի նախագահը:

*Արձանագրության օրինակելի ձև  
ինքնաբացարկի դեպքում*

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N \_\_\_\_\_**

ԹԻՎ \_\_\_\_ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԻ ԹԻՎ \_\_\_\_ / \_\_\_\_ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ  
\_\_\_\_\_ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիվ \_\_\_\_ ընտրատարածքի թիվ \_\_\_\_ / \_\_\_\_ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ  
(նախագահ կամ քարտուղար) \_\_\_\_\_ ը 00.00.2012թ. ներկայացրել է ինքնաբացարկի  
դիմում, որով խնդրել է վաղաժամկետ դադարեցնել իր լիազորությունները: Նշված դիմումը մուտք  
է եղել թիվ \_\_\_\_ ընտրատարածքային ընտրական հանձնաժողով 00.00.2012թ-ին:  
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 43-րդ հոդվածի 4-րդ  
մասի 2-րդ պարբերությամբ, **արձանագրում եմ**

Թիվ \_\_\_\_ ընտրատարածքի թիվ \_\_\_\_ / \_\_\_\_ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ  
\_\_\_\_\_ լիազորությունների վաղաժամկետ դադարման փաստը:

Թիվ \_\_\_\_ ընտրատարածքային  
ընտրական հանձնաժողովի նախագահ Կ.Տ  
« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2012թ.

*Արձանագրության օրինակելի ձև  
Կուսակցության կամ ԸԸՀ-ի նախագահի կամ  
ՏԸՀ անդամին առաջարկած ԸԸՀ-ի անդամի պահանջի դեպքում*

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N \_\_\_\_\_**

ԹԻՎ \_\_\_\_ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԻ ԹԻՎ \_\_\_\_ / \_\_\_\_ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ  
\_\_\_\_\_ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
\_\_\_\_\_ ը 00.00.2012թ.

Նշվում է կուսակցության անվանումը կամ ԸԸՀ-ի նախագահի կամ ՏԸՀ անդամին առաջարկած ԸԸՀ-ի անդամի անուն, ազգանունը

Ներկայացրել է դիմում, որով պահանջում է վաղաժամկետ դադարեցնել թիվ \_\_\_\_ ընտրատարածքի  
թիվ \_\_\_\_ / \_\_\_\_ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ \_\_\_\_\_  
-ի լիազորությունները: Նշված դիմումը մուտք է եղել թիվ \_\_\_\_ ընտրատարածքային ընտրական  
հանձնաժողով 00.00.2012թ-ին:  
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 43-րդ հոդվածի  
5-րդ մասի 3-րդ պարբերությամբ,  
**արձանագրում եմ**

Թիվ \_\_\_\_ ընտրատարածքի թիվ \_\_\_\_ / \_\_\_\_ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ  
\_\_\_\_\_ լիազորությունների վաղաժամկետ դադարման փաստը:

Թիվ \_\_\_\_ ընտրատարածքային  
ընտրական հանձնաժողովի նախագահ Կ.Տ  
« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2012թ.

### 7.3 ՏԸՀ-ում թափուր տեղերի համալրում

Եթե ԸՕ-ով վերը նշված ժամկետում համապատասխան կուսակցությունը կամ ԸԸՀ-ը ՏԸՀ-ի անդամ չի նշանակում, ապա այդ թափուր տեղը լրացնում է ԸԸՀ-ի նախագահը՝ ՏԸՀ-ներում ընդգրկվելու իրավունք ունեցող անձանցից: Եթե ՏԸՀ-ի նշանակվող անդամը պետք է զբաղեցնեք հանձնաժողովի նախագահի կամ քարտուղարի պաշտոնը, ապա ԸԸՀ-ի նախագահի նշանակած անդամը նշանակվում է այդ պաշտոնում:

*Որոշման օրինակելի ձև*

<b>ԹԻՎ ____ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՈՐՈՇՈՒՄ N ____-Ա</b>	
« ____ » _____ 2012թ.	_____ -ի ՄԱՍԻՆ
<p>Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 42-րդ հոդվածի 9-րդ մասով և հիմք ընդունելով թիվ ____ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի 2012թ. _____ « ____ »-ի «Թիվ ____ ընտրատարածքի թիվ ____ / ____ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ _____ լիազորությունների վաղաժամկետ դադարման փաստի մասին» N ____ արձանագրությունը և հաշվի առնելով, որ թիվ ____ / ____ տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում _____ կուսակցության (կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի) կողմից հանձնաժողովի անդամ չի նշանակվել՝</p> <ol style="list-style-type: none"><li>1. Հանձնաժողովի թափուր տեղը լրացնել և թիվ ____ / ____ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ (նախագահ, քարտուղար) նշանակել _____ -ին:</li><li>2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:</li></ol> <p>Թիվ ____ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ</p> <p style="text-align: right;">Կ.Տ</p>	

### 7.4 ՏԸՀ-ի նախագահի կամ քարտուղարի նշանակում՝ պաշտոնանկության դեպքում

ՏԸՀ-նախագահին կամ քարտուղարին պաշտոնանկ անելու դեպքում ՏԸՀ-ի նախագահ կամ քարտուղար նշանակում է ԸԸՀ-ի նախագահը՝ ՏԸՀ-ի այլ անդամներից:

*Որոշման օրինակելի ձև*

<b>ԹԻՎ ____ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՈՐՈՇՈՒՄ N ____-Ա</b>	
« ____ » _____ 2012թ.	_____ -ի ՄԱՍԻՆ
<p>Հիմք ընդունելով թիվ ____ ընտրատարածքի թիվ ____ / ____ տեղամասային ընտրական հանձնաժողովի « ____ » _____ 2012 թ. որոշումը «Թիվ ____ / ____ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին (քարտուղարին) պաշտոնանկ անելու մասին» և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասով՝</p> <ol style="list-style-type: none"><li>1. Թիվ ____ ընտրատարածքի թիվ ____ / ____ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ (քարտուղար) նշանակել _____ -ին:</li><li>2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:</li></ol> <p>Թիվ ____ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ</p> <p style="text-align: right;">Կ.Տ</p>	



### Ուշադրություն

Եթե քվեարկության օրը՝ ժամը 8.00-ին, մինչև 1 000 ընտրող ունեցող ընտրական տեղամասի դեպքում 5-ից պակաս, իսկ 1 000-ից ավելի ընտրող ունեցող ընտրական տեղամասի դեպքում 7-ից պակաս թվով ՏԸՀ-ի անդամ է ներկայացել, ապա ՏԸՀ-ի նախագահը անմիջապես տեղեկացնում է ԸԸՀ-ի նախագահին:

Չներկայացած անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարում են: Այդ փաստը արձանագրում է ԸԸՀ նախագահը (կազմում է արձանագրություն) և անդամների թիվը համապատասխանաբար մինչև 5 և 7 անդամ լրացնում է ՏԸՀ-ներում ընդգրկվելու իրավունք ունեցող անձանց թվից:

Ձև

**ԹԻՎ \_\_\_\_ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՈՐՈՇՈՒՄ N \_\_\_\_-Ա**

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2012թ. \_\_\_\_\_-ի ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 42-րդ հոդվածի 10-րդ մասով և հիմք ընդունելով թիվ \_\_\_\_ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի 2012թ. \_\_\_\_\_ « \_\_\_\_ »-ի «Թիվ \_\_\_\_ ընտրատարածքի թիվ \_\_\_\_ / \_\_\_\_ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ \_\_\_\_\_ լիազորությունների վաղաժամկետ դադարման փաստի մասին» N \_\_\_\_ արձանագրությունը՝ թիվ \_\_\_\_ ընտրատարածքի թիվ \_\_\_\_ / \_\_\_\_ տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմը լրացնել և հանձնաժողովի անդամ (նախագահ, քարտուղար) նշանակել \_\_\_\_\_ -ին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Թիվ \_\_\_\_ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Կ.Տ

ԸԸՀ նախագահի կողմից ՏԸՀ-ի կազմում նշանակում կատարելուց հետո (դադարման կամ դադարեցման հիմքով) պետք է ԸԸՀ-ը համապատասխան փոփոխություն կատարի «Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ եվ քարտուղար նշանակելու մասին» որոշման մեջ:

Որոշման օրինակելի ձև

**ԹԻՎ \_\_\_\_ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N \_\_\_\_-Ա**

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2012թ. \_\_\_\_\_թ.

Թիվ \_\_\_\_ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ \_\_\_\_\_ « \_\_\_\_ »-ի ԹԻՎ \_\_\_\_-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով թիվ \_\_\_\_ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի « \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2012թ. N \_\_\_\_ -Ա որոշումը \_\_\_\_\_ -ի մասին՝ թիվ \_\_\_\_ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

## ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Թիվ \_\_\_\_\_ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի \_\_\_\_\_ «\_\_\_\_\_»-ի «Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար նշանակելու մասին» N \_\_\_\_\_-Ա որոշման \_\_\_\_\_-րդ կետի «\_\_\_\_\_յան \_\_\_\_\_» բառերը փոխարինել «\_\_\_\_\_յան \_\_\_\_\_» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Թիվ \_\_\_\_\_ ընտրատարածքային  
ընտրական հանձնաժողովի նախագահ

Կ.Տ



### Ուշադրություն

Առանձին ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու կամ այդ ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակվելու դեպքում այդ ՏԸՀ-ի անդամների լիազորությունները համարվում են վաղաժամկետ դադարած, **և նրանք չեն կարող ընդգրկվել վերաքվեարկություն անցկացնող ՏԸՀ-ների կազմերում**: Այս դեպքում ՏԸՀ-ները կազմավորվում են առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու մասին որոշում ընդունելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:



## ՆԱԽՆՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ:

Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունն արգելվում է:

Արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել՝



պետական և ՏԻՄ-երին, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողներին, ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս,



սահմանադրական դատարանի անդամներին, դատավորներին, դատախազներին, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, քրեակատարողական հիմնարկներում ծառայողներին, զինծառայողներին,



ընտրական հանձնաժողովի անդամներին:

Նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: Այն բարեգործական կազմակերպությունները, որոնց անվանումները կարող են նմանեցվել (ասոցացվել) կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների անվանումներին, թեկնածուների անուններին, նախընտրական քարոզչության ժամանակ բարեգործություն չեն կարող իրականացնել այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, որոնց մասնակ-

ցում են այդ թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները կամ նրանց առաջադրած թեկնածուները:

Թեկնածուները, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները, ինչպես նաև ընտրությունների մյուս մասնակիցները պարտավոր են պահպանել նախընտրական քարոզչության կազմակերպման սահմանված կարգը:

Եթե ԸԸՀ-ը տեղեկանում կամ հայտնաբերում է անանուն կամ կեղծ քարոզչական տպագիր նյութերի մասին, ապա դիմում է իրավասու մարմիններին՝ ապօրինի գործունեությունը դադարեցնելու համար:

**! Ընտրական հանձնաժողովները հսկում են նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանումը:**

Թեկնածուների կողմից այդ կարգի խախտման դեպքում թեկնածուին գրանցած հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ՝ դրանք կանխելու կամ կիրառում նախազգուշացում խախտում թույլ տված թեկնածուի նկատմամբ՝ տալով խախտումը դադարեցնելու համար 3 օրը չգերազանցող ողջամիտ ժամկետ: Նշված ժամկետում խախտումը չդադարեցնելու դեպքում հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար:

Նախընտրական քարոզչության սահմանված կարգի այնպիսի խախտման դեպքում, որը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, եթե այն կատարել է թեկնածուն, ապա թեկնածուին գրանցած հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, կուսակցության, կուսակցության դաշինքի ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար:

## 9 ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱԺ-ի համամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ տեղամասային կենտրոններ կազմավորվում են նաև կալանավորված անձանց պահելու վայրերում:

ԸԸՀ-ի նախագահը քվեարկության օրվանից 10 օր առաջ կալանավորված անձանց պահելու վայր է ուղարկում **ԱԺ-ի համամասնական ընտրակարգով** գրանցված կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական քարոզչության հանձնաժողովի տրամադրության տակ գտվող նյութերը:

ԸԸՀ-ի նախագահը քվեարկության օրվանից 5 օր առաջ քրեակատարողական հիմնարկի ղեկավարին է ներկայացնում այն վստահված անձանց, դիտորդների և ՋԼՄ-ների ներկայացուցիչների ցուցակը, որոնք ցանկություն են հայտնել ներկա լինել կալանավորված անձանց պահելու վայրում և հետևել ՏԸՀ-ի նիստերին և քվեարկությանը:

Կալանավորված անձանց պահելու վայրում քվեարկության սկիզբը սահմանում է ԿԸՀ-ը:

**! Կալանավորված անձանց պահելու վայրում, անկախ ընտրողների թվից, ՏԸՀ-ը քվեարկության արդյունքների ամփոփումն սկսում է ժամը 20.00-ին:**

**9.1 Քվեարկության օրվա համար անհրաժեշտ ընտրական փաստաթղթեր և նյութեր**

**ԸԸՀ-ը ԿԸՀ-ից ստանում է հետևյալ ընտրական նյութերը՝**

- ԱԺ համամասնական և մեծամասնական ընտրակարգերով ընտրությունների քվեա-

թերթիկներ (ընտրական տեղամասում ընտրողների թվի մինչև 3 տոկոս ավելի քանակով, բայց ոչ պակաս, քան ընտրողների թվից 2 քվեաթերթիկ ավելին)։

- Աժ համամասնական և մեծամասնական ընտրակարգերով ընտրությունների քվեարկության ծրարներ (քվեաթերթիկների թվին համապատասխան)։
- ՏԸՀ-ների՝ քվեարկության արդյունքների արձանագրության ձևաթղթեր /յուրաքանչյուր ընտրությունների համար առնվազն 4-ական օրինակ/
- ՏԸՀ-ի քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածքի ձևաթղթեր,
- համամասնական ընտրակարգով քվեաթերթիկի ստվարաթղթե կաղապարներ սահմանափակ տեսողությամբ ընտրողների համար (յուրաքանչյուր տեղամասի հաշվարկով 1 կաղապար)։
- ՏԸՀ-ների փաթեթավորված և կնքված կնիքներ (յուրաքանչյուր տեղամասին 1 կնիք հաշվարկով)։
- ՏԸՀ-ների անհատական կնիքներ։
- ՏԸՀ-ի կնիքների և ՏԸՀ-ի անդամների անհատական կնիքների օգտագործման համար թանաք և բարձիկ։
- ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը դրոշմակնքելու համար նախատեսված դրոշմակնիքներ։



### **Ուշադրություն**

Եթե ընտրատարածքում կան ՏԸՀ-ներ, որոնք կազմակերպելու են շրջիկ արկղով քվեարկություն, ապա ԸԸՀ-ի նախագահը շրջիկ արկղով քվեարկություն կազմակերպող ՏԸՀ-ի համար ստանում է 2 դրոշմակնիք։

- ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը դրոշմակնքելու համար նախատեսված հատուկ թանաք և բարձիկ (բարձիկներ՝ շրջիկ արկղով քվեարկություն կազմակերպող ՏԸՀ-ի դեպքում)։
- քվեախցիկներ (յուրաքանչյուր 750 ընտրողի համար մեկ քվեախցիկ հաշվարկով)։
- քվեատուփեր իրենց կապիչներով (յուրաքանչյուր ՏԸՀ-ի համար 2 քվեատուփ հաշվարկով)։
- շրջիկ արկղ (շրջիկ արկղներ) իր կապիչներով, եթե ընտրատարածքում կան ՏԸՀ-ներ, որոնք քվեարկություն են կազմակերպելու ստացիոնար բժշկական հաստատությունում և (կամ) ձերբակալված անձանց պահելու վայրում։
- փաթեթներ (ծրարներ) ՏԸՀ-ներում ընտրական փաստաթղթերը փաթեթավորելու համար։
- մեկանգամյա օգտագործման պարկեր (յուրաքանչյուր ՏԸՀ-ի համար 2 պարկ հաշվարկով)։
- քվեաթերթիկների նմուշները՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար։
- համամասնական ընտրակարգով ընտրություններին քվեարկվող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար,
- քվեարկության կարգը լուսաբանող պաստառներ,
- գրենական և այլ անհրաժեշտ պարագաներ։

ԸԸՀ-ի նախագահը պատասխանատու է ընտրությունների համար անհրաժեշտ նյութերի



ստացման, տեղափոխման և պահպանման համար: ՀՀ ոստիկանությունն ապահովում է ԸԸՀ-ում ընտրական փաստաթղթերի պահպանությունը:

## 9.2 Քվեարկության օրվա համար անհրաժեշտ ընտրական փաստաթղթերի և նյութերի տրամադրումը տեղամասային ընտրական հանձնաժողովներին

ՏԸՀ-ներին ընտրական նյութեր են տրամադրվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Այս գործընթացը նպատակահարմար է իրականացնել երկու փուլով՝

- նախապատրաստական փուլ և
- իրականացման փուլ:

### **Նախապատրաստական փուլ**

Քվեարկության օրվանից երկու օր առաջ ԸԸՀ անդամները տեսակավորում են յուրաքանչյուր ՏԸՀ-ին տրամադրվելիք ընտրական նյութերը:

Գործընթացը կարգավորելու նպատակով ԸԸՀ նախագահը կազմում է ՏԸՀ նախագահներին ընտրական նյութերի հանձնման ժամանակացույց, որի մասին տեղեկացնում է ՏԸՀ նախագահներին:

### **Իրականացման փուլ**

Քվեարկության նախորդ օրը յուրաքանչյուր տեղամասի համար

ՏԸՀ-ի նախագահին հանձնվում են՝

- քվեաթերթիկները (ընտրական տեղամասում ընտրողների թվի մինչև 3 տոկոս ավելի քանակով, բայց ոչ պակաս, քան ընտրողների թվից 2 քվեաթերթիկ ավելին).
- քվեարկության ծրարները (քվեաթերթիկների թվին համապատասխան).
- համամասնական ընտրակարգով քվեաթերթիկի ստվարաթղթի 1 կադապար սահմանափակ տեսողությամբ ընտրողների համար.
- ՏԸՀ-ի՝ քվեարկության արդյունքների արձանագրության ձևաթղթերը /յուրաքանչյուր ընտրությունների համար առնվազն 4-ական օրինակ/
- արձանագրությունից քաղվածքի ձևեր,
- ՏԸՀ-ի փաթեթավորված և կնքված կնիքը.
- ՏԸՀ-ի անդամների անհատական կնիքները.
- հանձնաժողովի և ՏԸՀ-ի անդամների անհատական կնիքների օգտագործման համար թանաքը և բարձիկը.
- ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը դրոշմակնքելու համար նախատեսված դրոշմակնիքը: Շրջիկ արկղով քվեարկություն կազմակերպող տեղամասային ընտրական հանձնաժողովին՝ 2 դրոշմակնիք,
- ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը դրոշմակնքելու համար նախատեսված հատուկ թանաքը և բարձիկը.
- քվեախցիկները (յուրաքանչյուր 750 ընտրողի համար մեկ քվեախցիկ հաշվարկով).
- 2 քվեատուփ իրենց կապիչներով,
- շրջիկ արկղ իր կապիչներով, եթե տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկություն է կազմակերպելու ստացիոնար բժշկական հաստատությունում կամ ձերբակալված անձանց պահելու վայրում.

- փաթեթներ (ծրարներ) ընտրական փաստաթղթերը փաթեթավորելու համար.
- տեսակավորված և փաթեթավորված ընտրական փաստաթղթերը հավաքելու համար մեկանգամյա օգտագործման 2 պարկ.
- քվեաթերթիկների նմուշները՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար.
- համամասնական ընտրակարգով ընտրություններին քվեարկվող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար,
- քվեարկության կարգը լուսաբանող պաստառներ,
- գրենական և այլ անհրաժեշտ պարագաներ:

ՏԸՀ-ին հատկացող ընտրական փաստաթղթերը և գույքը ԸԸՀ-ի նախագահը հանձնում է ստացական տալու միջոցով: Ստացականը ստորագրվում է ԸԸՀ-ի և ՏԸՀ-ի նախագահների կողմից և կնքվում ԸԸՀ-ի կնիքով:

<p style="text-align: center;"><b>ՍՏԱՑԱԿԱՆ</b></p> <p style="text-align: center;">Տեղամասային ընտրական հանձնաժողովին ընտրական փաստաթղթերի և գույքի հատկացման վերաբերյալ</p>	<p style="text-align: center;"><b>ՍՏԱՑԱԿԱՆ</b></p> <p style="text-align: center;">Տեղամասային ընտրական հանձնաժողովին ընտրական փաստաթղթերի և գույքի հատկացման վերաբերյալ</p>
Թիվ ____ ընտրատարածքի թիվ ____ տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացվեց.	Թիվ ____ ընտրատարածքից թիվ ____ տեղամասային ընտրական հանձնաժողովին ստացավ.
<input type="checkbox"/> քվեաթերթիկներ _____ հատ	<input type="checkbox"/> քվեաթերթիկներ _____ հատ
<input type="checkbox"/> քվեարկության ծրարներ _____ հատ	<input type="checkbox"/> քվեարկության ծրարներ _____ հատ
<input type="checkbox"/> արձանագրության ձևաթղթեր _____ հատ	<input type="checkbox"/> արձանագրության ձևաթղթեր _____ հատ
<input type="checkbox"/> ՏԸՀ կնիք _____ հատ	<input type="checkbox"/> ՏԸՀ կնիք _____ հատ
<input type="checkbox"/> ՏԸՀ անդամների անհատական կնիքներ _____ հատ	<input type="checkbox"/> ՏԸՀ անդամների անհատական կնիքներ _____ հատ
<input type="checkbox"/> Դրոշմակնիք _____ հատ	<input type="checkbox"/> Դրոշմակնիք _____ հատ
<input type="checkbox"/> դրոշմակնիք հատուկ թանաք և բարձիկ	<input type="checkbox"/> դրոշմակնիք հատուկ թանաք և բարձիկ
<input type="checkbox"/> քվեախցիկներ _____ հատ	<input type="checkbox"/> քվեախցիկներ _____ հատ
<input type="checkbox"/> քվեատուփ _____ հատ	<input type="checkbox"/> քվեատուփ _____ հատ
<input type="checkbox"/> շրջիկ արկղ _____ հատ	<input type="checkbox"/> շրջիկ արկղ _____ հատ
<input type="checkbox"/> մեկանգամյա օգտագործման պարկ __ հատ	<input type="checkbox"/> մեկանգամյա օգտագործման պարկ __ հատ
<input type="checkbox"/> գրենական և այլ անհրաժեշտ պարագաներ:	<input type="checkbox"/> գրենական և այլ անհրաժեշտ պարագաներ:
ԸԸՀ նախագահ՝ _____ <i>ստորագրություն</i>	ԸԸՀ նախագահ՝ _____ <i>ստորագրություն</i>
ՏԸՀ նախագահ՝ _____ <i>ստորագրություն</i>	ՏԸՀ նախագահ՝ _____ <i>ստորագրություն</i>
ԸԸՀ-ի Կ.Տ.	ԸԸՀ-ի Կ.Տ.
«___» _____ 20 թ.	«___» _____ 20 թ.

**ԸԸՀ-ը հեղկում է, որ ՏԸՀ-ները քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ը**

- ստորագրեն բոլոր քվեաթերթիկները և ընտրողների ցուցակների բոլոր էջերը,

- ընտրական փաստաթղթերը սահմանված կարգով պահվեն (տեղադրվեն) ընտրական փաստաթղթերի պահպանման համար նախատեսված չիրկիզվող պահարանում,
- պահարանը սահմանված կարգով պահպանության հանձնեն ոստիկանության ծառայողներին,
- ավարտեն քվեարկության սենյակի կահավորումը.
  - ◆ քվեարկության խցիկները տեղադրվում են միմյանցից առնվազն 1 մետր հեռավորությամբ և այն դիրքով, որ ընտրողը քվեարկելիս լինի հանձնաժողովին դեմքով և թիկունքով դեպի պատը,
  - ◆ քվեատուփը, հանձնաժողովի անդամների աշխատասեղանները տեղադրվեն ընտրական տեղամասում գտնվելու իրավունք ունեցող անձանց համար տեսանելի տեղում,
  - ◆ ընտրողների գրանցման և ընտրողներին քվեաթերթիկներ ու քվեարկության ծրարներ հատկացնող անդամների աշխատատեղերից յուրաքանչյուրի միջև նախատեսվի 1 աշխատատեղ վստահված անձի համար,
  - ◆ քվեարկության սենյակում կամ դրա մուտքի մոտ փակցված լինեն քվեաթերթիկների նմուշները, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակները:

### 9.10 Տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանքի վերահսկումը քվեարկության օրվա ընթացքում

**ԸԸՀ-ը ստուգում է, որ.**

- ընտրատարածքի բոլոր տեղամասերը լիարժեք պատրաստ են քվեարկությունը սկսելու համար,
- ՏԸՀ-ների բոլոր անդամները ներկա են,
- ժամը 8.00-ին բոլոր տեղամասերը բացված են:



#### **Ուշադրություն**

1. **Քվեարկության ընթացքում ԸԸՀ-ը ՏԸՀ-ի նախագահից ստանում է՝ մինչև ժամը 11.30-ը, 14.30-ը, 17.30-ը և 20.30-ը** տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը.
2. **ԸԸՀ-ն ամփոփում է այդ տվյալները, հրապարակում և հաղորդում** կենտրոնական ընտրական հանձնաժողով:

#### **Արտակարգ դեպքեր, իրավիճակներ**

Քվեարկության օրը ԸԸՀ-ը կարող է դիմում-բողոքներ ստանալ ՏԸՀ-ների որոշումների կամ գործողությունների (անգործության) վերաբերյալ: ԸԸՀ-ի քարտուղարն այդ դիմումները գրառում է ԸԸՀ-ի գործավարության մատյանում: ԸԸՀ-ը պարտավոր է համապատասխան միջոցներ ձեռնարկել անհապաղ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ: ԸԸՀ-ը կարող է քննարկել և վերացնել ՏԸՀ-ների ԸՕ-ին հակասող որոշումները:

ԸԸՀ-ի անդամները կարող ԸԸՀ-ի նախագահի հանձնարարությամբ ստուգայցեր կատարել ընտրական տեղամասեր, հետևել քվեարկության ընթացքին և ՏԸՀ աշխատանքին: Հարկ եղած դեպքերում կազմակերպչական, իրավաբանական և մեթոդական խորհրդատվություններով նրանք պետք է օգնություն ցուցաբերեն ՏԸՀ-ի անդամներին: Նախքան քվե-

արկության ընթացքում տեղամասային կենտրոնում ծագող ցանկացած արտակարգ իրավիճակի շուրջ որևէ որոշում կայացնելը, ՏԸՀ-ի նախագահը խորհրդակցում է ԸԸՀ-ի հետ: ԸԸՀ-ի նախագահը ԸԸՀ-ի անդամներին լիազորում է այցելել այն ՏԸՀ-ներ, որտեղ ծագել են արտակարգ իրավիճակներ:

### **9.11 Ընտրական փաստաթղթերը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելը**

**Քվեարկության ավարտից հետո ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում ԸԸՀ-ը ՏԸՀ-ներից ստանում է.**

- ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկերը,
- քվեարկության արդյունքների արձանագրության 2-ական օրինակները,
- չօգտագործված քվեարկության ծրարները,
- չսահմանված նմուշի քվեարկության ծրարների փաթեթները,
- տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը,
- տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը և դրոշմակնիքը,
- քվեատուփերը (շրջիկ արկղը),
- քվեարկության խցիկները:

Ընտրական փաստաթղթերն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում հանձնվում և ընդունվում են հանձնողի ու ընդունողի կողմից ստորագրելու և ստացական տալու միջոցով:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի գործողությունները տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրությունները ստանալուց հետո:

ԸԸՀ-ում ստուգվում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների կազմման վավերականությունը, **իսկ թվաբանական սխալների առկայության դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վերացնում են այդ սխալները՝ ուղղումները վավերացնելով իրենց ստորագրություններով:**

**! Ելակետային տվյալների փոփոխություն չի կատարվում: Ելակետային են տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից հատ-հատ հաշվելու միջոցով ստացված տվյալները:**

ԸԸՀ-ում նշում է կատարվում տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության ընդունման ամսաթվի և ժամի մասին, ինչը վավերացվում է ԸԸՀ-ի նախագահի ստորագրությամբ և հանձնաժողովի կնիքով:

ԸԸՀ-ը համեմատում է ՏԸՀ-ի կնիքի համարը ՏԸՀ-ի արձանագրության կնիքի համարի հետ:

### **9.12 ԸԸՀ-ի կողմից ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալները համակարգիչ մուտքագրումը**

ԸԸՀ-ի նախագահն ապահովում է տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության տվյալների մուտքագրումը համակարգիչ և պատասխանատու է այդ տվյալների ճշգրիտ մուտքագրման համար:

Տվյալների մուտքագրումը համակարգիչ իրականացնում է ԿԸՀ-ի աշխատակազմի աշխատակիցը «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով: ՏԸՀ-ի արձանագ-

րության յուրաքանչյուր տվյալ մուտքագրվում է քվարկության արդյունքների աղյուսակի՝ այդ տվյալի համար նախատեսված դաշտում, որն ունի հետևյալ տեսքը.

Ընտրատարածք N	Տեղամաս N	Քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմված ընտրողների լրացուցիչ ցուցակի ընտրողների թիվը	Ըստ գտնվելու վայրի ընտրողների լրացուցիչ ցուցակի ընտրողների թիվը	Հաշվառում չունեցող ընտրողների լրացուցիչ ցուցակի ընտրողների թիվը	Ոստիկանության ծառայողների լրացուցիչ ցուցակի ընտրողների թիվը	Ստացիոնար բուժաստատության ընտրողների լրացուցիչ ցուցակի ընտրողների թիվը	Ձեռքակալված անձանց պահելու վայրի ընտրողների լրացուցիչ ցուցակի ընտրողների թիվը	Ընտրողների հիմնական ցուցակի ընտրողների թիվը	Ընտրողների ընդհանուր թիվը	Քվեարկության մասնակիցների թիվը	ՏԸՀ-ների հասկացված քվեաթերթիկների թիվը	Ելունդների համարները	Մարված քվեաթերթիկների թիվը	Անվավեր քվեաթերթիկների թիվը	...	Յուրաքանչյուր թեկնածուին, կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը	Թեկնածուին, կուսակցությանը կամ կուսակցությունների դաշինքին դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը	Քվեատուփում առկա սահմանված նմուշի քվեարկության ծրարների թիվը	Անճշտությունների չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	

քվեարկության արդյունքների աղյուսակի վերնագիրը պարունակում է ընտրության անվանումը, ՏԸՀ-ի համարը:

ԸԸՀ-ի նախագահը կամ նրա հանձնարարությամբ հանձնաժողովի անդամներից որևէ մեկը պարբերաբար, բայց ոչ ուշ, քան 3 ժամը մեկ, համակարգչի օգնությամբ կատարում է ընտրատարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորում ու տպագրում այն՝ ըստ ընտրական տեղամասերի:

**! Ուշադրություն**

Ընտրատարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորման օրինակը՝ վավերացված հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով, անհապաղ փակցվում է ԸԸՀ-ում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

**Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների հիման վրա տվյալների մուտքագրումը համակարգիչ ավարտվում է քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում (ոչ ուշ, քան քվեարկության հաջորդ օրը ժամը 14.00):**

Ընտրական հանձնաժողովի նիստին ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվում է ընտրատարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորման օրինակ՝ վավերացված հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով ու հանձնաժողովի կնիքով:

Համակարգիչ մուտքագրված՝ տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության տվյալները ԸԸՀ-ներից ԿԸՀ տեղափոխվում են էլեկտրոնային եղանակով՝ «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով:

**! Ուշադրություն**

ԸԸՀ-ն ընտրատարածքում ԱԺ համամասնական ընտրակարգով ընտրությունների քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրություն չի կազմում, քվեարկության արդյունքների վերահաշվարկի համար ԸՕ-ով սահմանված ժամկետներում ուսումնասիրում է ՏԸՀ-ների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումները, ուսումնասիրության արդյունքներն ամփոփում է հանձնաժողովի նիստում և այդ մասին ընդունած որոշումը ներկայացնում ԿԸՀ:



**ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ  
ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ  
ԱՄՓՈՓԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

ԸԸՀ-ը ԱԺ-ի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների քվեարկության նախնական արդյունքներն ամփոփում և արձանագրությամբ վավերացնում է, **քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում (ոչ ուշ, քան քվեարկության հաջորդ օրը ժամը 14.00):**

*Նախնական արձանագրության ձև*

<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ</b>	
<b>ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	
<i>նշվում է քվեարկության օրը, ամիսը, տարեթիվը</i>	
Ընտրատարածք թիվ _____	
<b>ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ</b>	
Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների քվեարկության արդյունքների <i>Նախնական</i>	
<b>Թիվ _____ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է</b>	
Ընտրողների հիմնական ցուցակների ընտրողների թիվը	
Քվեարկության օրն ընտրական տեղամասերում կազմված ընտրողների լրացուցիչ ցուցակների ընտրողների թիվը	
Ընտրատարածքում ընտրողների ընդհանուր թիվը	
Քվեարկության մասնակիցների թիվը	
ՏԸՀ-ներին հատկացված քվեաթերթիկների թիվը	
Ելունդների համարները	
ՏԸՀ-ներում մարված քվեաթերթիկների ընդհանուր թիվը	
Անվավեր քվեաթերթիկների թիվը	
<b>Թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը (լրացվում է ըստ քվեաթերթիկի հերթականության)</b>	<b>Կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը</b>
1.	
2.	
3.	
4.	
5.	
Թեկնածուին դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը (տողը նշվում է մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում)	
Քվեատուվում առկա սահմանված նմուշի քվեարկության ծրարների թիվը	
Անճշտությունների գումարային չափը	
Հանձնաժողովի նախագահ _____ <i>ազգանուն, անուն, հայրանուն, ստորագրություն</i>	
Նախագահի տեղակալ _____	
Քարտուղար _____	
Անդամներ _____	
Արձանագրությունը կազմվել է « ____ » _____ 20 թ., ժամը ____-ին	
Կ.Տ.	



## **Ուշադրություն**

- Կազմավորված բոլոր ընտրական տեղամասերից կնիքները ստանալուց հետո ԸԸՀ-ը դրանք փաթեթավորում է, փաթեթի վրա նշում առկա կնիքների քանակը և փաթեթը կնքում:
- կնիքները ԿԸՀ են տեղափոխվում քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ հետո համապատասխան մասնագիտացված կազմակերպության, իսկ Երևան քաղաքում՝ ԸԸՀ-ների միջոցով:
- Կնիքները մասնագիտացված կազմակերպության միջոցով տեղափոխելու դեպքում ԸԸՀ-ի գրանցամատյանում գրառում է կատարվում՝ կնիքների փաթեթը մասնագիտացված կազմակերպության ներկայացուցչին հանձնելու մասին:
- ԸԸՀ-ն քվեարկության ավարտից 24 ժամ հետո ԿԸՀ է ներկայացնում ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների մեկ օրինակները:



## **ԸԸՀ-ն ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմումներն ընդունում է քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ը:**

### **Քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում կարող են ներկայացնել՝**

- թեկնածուն.
- ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը ներկա գտնված վստահված անձը.
- ՏԸՀ անդամը, եթե արձանագրությունում գրառում է կատարել հատուկ կարծիք ունենալու մասին:

ԸԸՀ-ում վերահաշվարկի աշխատանքներն սկսվում են վերահաշվարկի դիմումների ընդունման համար սահմանված ժամկետի հաջորդ օրը՝ ժամը 9.00-ից, և դադարեցվում են քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, ժամը 14.00-ին

- Վերահաշվարկ իրականացնելիս ԸԸՀ-ն աշխատում է առանց հանգստյան օրերի՝ ժամը 9.00-ից մինչև 18.00-ն: ԸԸՀ-ը շարունակում է վերահաշվարկը ժամը 18.00-ից հետո, եթե չի ավարտել ընտրական տեղամասի արդեն սկսած վերահաշվարկը, ինչպես նաև այն դեպքերում, եթե մինչև ժամը 18.00-ն աշխատելու պայմաններում մինչև վերահաշվարկի վերջնաժամկետը հնարավոր չէ ավարտել ԸՕ-ի 48-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված քվեարկության արդյունքների վերահաշվարկը:

Մեկ ընտրական տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկի տևողությունը չի կարող գերազանցել 4 ժամը:

### **ԸԸՀ-ը քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, հիմք ընդունելով՝**

- ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունները,
- վերահաշվարկի արդյունքները,
- քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունված որոշումները

***կազմում է արձանագրություն ընտրատարածքում ԱԺ-ի մեծամասնական ընտրակարգով պարզամավորի ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ:***

ԸԸՀ-ն Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների վերաբերյալ արձանագրություն՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ստանում է «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով:

Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի անդամները, այն կնքում է հանձնաժողովի նախագահը:

ԸԸՀ-ի նախագահը հրապարակում է կազմված արձանագրությունը:



**Արձանագրության մեկ օրինակը փակցվում է հանձնաժողովում՝ տեսանելի տեղում՝ վերը նշված գործողություններն ավարտվելուց անմիջապես հետո:**

ԸԸՀ-ի նիստին ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվում է արձանագրության պատճենը՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով ու հանձնաժողովի կնիքով:

### **ԸԸՀ-ը քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, հիմք ընդունելով**

- ընտրատարածքում քվեարկության արդյունքների արձանագրությունը,
- դատարանի վճիռները,
- հանձնաժողովում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքով ընդունված որոշումները,
- ՏԸՀ-ների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ ընդունված որոշումը,

ամփոփում է ընտրատարածքում քվեարկության արդյունքները **և ընտրությունների արդյունքների վերաբերյալ ընդունում հետևյալ որոշումներից մեկը.**

- պատգամավոր ընտրվելու մասին.
- առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու մասին.
- պատգամավորի ընտրությունն անվավեր ճանաչելու մասին.
- պատգամավորի ընտրությունը չկայացած ճանաչելու մասին:

Պատգամավոր է ընտրվում այն թեկնածուն, որին կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ:

Մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում նա ընտրվում է, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին:

Եթե հավասար թվով առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացել են 2 և ավելի թեկնածուներ, ապա նրանց միջև անցկացվում է վիճակահանություն՝ ընտրված թեկնածուին որոշելու համար:

Եթե քվեարկության ընթացքում տեղի են ունեցել ԸՕ-ի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, ապա ԸԸՀ-ը որոշում է ընդունում առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին, եթե այդ միջոցով հնարավոր է շտկել այդ խախտումները: Եթե այդ միջոցով հնարավոր չէ շտկել այդ խախտումները, ապա ընտրություններն անվավեր են ճանաչվում, և նշանակվում է վերաքվեարկություն:

Եթե ընտրությունների նախապատրաստման ընթացքում կամ առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու ընթացքում տեղի են ունեցել ԸՕ-ի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, ապա ԸԸՀ-ը որոշում է ընդունում ընտրություններն անվավեր ճանաչելու մասին և նշանակում է վերաքվեարկություն:

Եթե ԸԸՀ-ը որոշում է ընդունում առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին, ապա վերաքվեարկությունն անցկացվում է այդ որոշումն ընդունելուց հետո՝ 7-րդ օրը: Այս դեպքում ԱԺ-ի մեծամասնական ընտրակարգով ընտրություն-



ների արդյունքների ամփոփման համար ԸՕ-ով սահմանված ժամկետները հաշվարկվում են վերաքվեարկության օրվանից:

Պատգամավորի ընտրությունը համարվում է չկայացած, եթե.

- քվեարկված միակ թեկնածուին կողմ չեն քվեարկել անհրաժեշտ թվով ընտրողներ.
- առավելագույն թվով կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած թեկնածուն մահացել է մինչև ընտրությունների արդյունքներն ամփոփելը.
- ԸՕ-ով թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետում և կարգով թեկնածու չի գրանցվել, կամ նույն ժամկետում գրանցվել է 2-ից պակաս թեկնածու:

ԸԸՀ-ի նախագահն ընտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշումը երկօրյա ժամկետում ներկայացնում է ԿԸՀ:

ԱԺ-ի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքով ընդունված որոշման վիճարկման մասին դիմում սահմանադրական դատարան կարող է ներկայացվել ընտրությունների արդյունքի պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ 5-րդ օրը, մինչև ժամը 18.00-ը:

Պատգամավորի ընտրությունն անվավեր ճանաչվելու դեպքում այդ մասին որոշումն ուժի մեջ մտնելուց ոչ շուտ, քան 10, և ոչ ուշ, քան 20 օր հետո ԸՕ-ով սահմանված կարգով թեկնածուների նույն կազմով անցկացվում է **վերաքվեարկություն**:

ԱԺ-ի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրության ժամանակ վերաքվեարկության արդյունքներն անվավեր ճանաչվելու դեպքում այդ որոշումն ուժի մեջ մտնելուց ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 40 օր հետո անցկացվում է նոր ընտրություն:

Պատգամավորի ընտրությունը չկայացած ճանաչվելու դեպքում այդ մասին որոշումն ուժի մեջ մտնելուց ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 40 օր հետո անցկացվում է նոր ընտրություն:

Մինչև քվեարկության ավարտը թեկնածուներից մեկի մահվան դեպքում նշանակվում է նոր ընտրություն, իսկ քվեարկությունն անցկացվում է նոր ընտրություն նշանակվելուց ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 40 օր հետո:

Ընտրությունից հետո՝ մինչև լիազորությունների ստանձնումը, ընտրված պատգամավորի մահվան դեպքում նշանակվում է նոր ընտրություն, իսկ քվեարկությունն անցկացվում է նոր ընտրություն նշանակվելուց ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 40 օր հետո:

Նոր ընտրությունն անցկացվում է թեկնածուների նոր առաջադրմամբ և արտահերթ ընտրությունների համար սահմանված ժամկետներում:

ԸԸՀ-ն ընտրություններից հետո 20-օրյա ժամկետում կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում հաշվետվություն ֆինանսական միջոցների ծախսման վերաբերյալ:



ՆՇՈՒՄՆԵՐ



Սույն ձեռնարկը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի օժանդակությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովը և Ընտրական համակարգերի միջազգային հաստատությունը, և այն կարող է չհամընկնել ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ Կառավարության կարծիքի հետ:

This guidebook is made possible by the support of the American people through the United States Agency for International Development (USAID). The contents are the responsibility of the Central Electoral Commission of the Republic of Armenia and the International Foundation for Electoral Systems and do not necessarily reflect the views of USAID or the United States Government.